

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՎԱՎԵՐ ԴԱՐՁՆԵԼ (*katargeō*)
SPECIAL TOPIC: NULL AND VOID (*katargeō*)

Այս (*katargeō*) տերմինը Պողոսի սիրելի տերմիններից է: Նա առնվազն քսանհինգ անգամ գործածել է այն, սակայն այս տերմինն ունի շատ ընդարձակ իմաստաբանական շարք:

Ա. Նրա հիմնական ստուգաբանական արմատը *argos* է, որը նշանակում է.

1. Անգործունակ՝ իներտ
2. Պարսպ՝ դատարկ
3. Չօգտագործվող
4. Անօգուտ
5. Չաշխատող

Բ. Բաղադրյալ բառը *kata* բառի հետ կիրառվում էր արտահայտելու՝

1. Անգործունակություն
2. Անօգտակարություն
3. Անվավեր մի բան
4. Անպետք մի բան
5. Ընդհանրապես չաշխատող մի բան

Գ. Այս տերմինը մի անգամ գործածվում է Ղուկասում, նկարագրելու անպտուղ՝ հետևաբար անօգտակար ծառի (տես՝ Ղուկ. 13:7):

Դ. Պողոսը գործածում է այս տերմինը փոխաբերական իմաստով՝ երկու հիմնական կերպերով.

1. Աստված ստեղծում է անգործունակ բաներ, որոնք թշնամի են մարդկությանը
ա. Մարդկության մեղավոր էությունը՝ Հռոմ. 6:6
բ. Մովսիսական օրենքը Աստծո կողմից «սերմի» մասին տրված խոստման հետ կապված՝ Հռոմ. 4:14; Գաղ. 3:17; 5:4,11; Եփես. 2:15
գ. Հոգևոր ուժերը՝ 1 Կորնթ. 15:24
դ. «Անօրենության մարդը»՝ 2 Թեսաղ. 2:8
ե. Ֆիզիկական մահը՝ 1 Կորնթ. 15:26; 2 Տիմ. 1:10 (Եբր. 2:14)
2. Աստված փոխարինում է հինը (ուխտը, դարաշրջանը) նորով՝
ա. Մովսիսական օրենքի հետ կապված բաներ՝ Հռոմ. 3:3,31; 4:14; 2 Կորնթ. 3:7,11,13,14
բ. Օրենքի վերաբերյալ կիրառված ամուսնության համանմանությունը՝ Հռոմ. 7:2,6
գ. Այս դարաշրջանի հետ կապված բաները՝ 1 Կորնթ. 13:8,10,11
դ. Այս մարմինը՝ 1 Կորնթ. 6:13
ե. Այս դարի առաջնորդները՝ 1 Կորնթ. 1:28; 2:6

Այս բառը թարգմանված է շատ տարբեր կերպերով, սակայն դրա հիմնական նշանակությունն է ինչ-որ բան անպիտան, անօգուտ, անգործ, անգոր, անվավեր դարձնելը, սակայն անպայման չէ վերացնելը կամ բնաջնջելը: